

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2018թ. հուլիսի 9-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 31-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվերակության դրեց օրակարգը, որը միաձայն ընդունվեց (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Գիտական հաղորդում:
2. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս.Դիրանյան):
3. 2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
4. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսումնական հարցերով խոհրդատուներ (կուրսատոր) պրոֆ. Հ.Խաչիկյանի, պրոֆ. Ա.Վաղարշյանի, Ա.Պետրոսյանի, դոց. Տ.Սիմոնյանի, դոց. Վ.Օհանյանի, սսիս. Կ.Ամիրջանի, հաշվետվությունը հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքների մասին:
5. ԵՊՀ գիտական խորհրդի անդամի ընտրություն:
6. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտամանկավարժական կազմի գիտական գործունեության մասին (հաշվետվություն և պլանավորում):
7. Հաղորդում հանրային իշխանության մարմինների կողմից ստացված՝ գործնական հիմնախնդիրների թեմատիկայի համակարգման ընթացքի վերաբերյալ:

1. **ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ դոց. Ա.Ղազինյան):**
Դոց. Ա.Ղազինյանը հաղես եկավ ՀՀ արտաքին քաղաքականության մշակման բնագավառում աութօրս կազմակերպություն ստեղծելու ծրագրի, դրա իրականացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ գիտական հաղորդմամբ:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ս.Առաքելյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունելի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս.Դիլբանդյան):

Պրոֆ. Ս.Դիլբանդյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. 2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց **2017-2018** ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները, ինչպես նաև ըստ կուրսերի՝ առաջադիմության հետևյալ պատկերը՝

1-ին կուրս՝ 163 ուսանողից 97-ը անբավարար գնահատական են ստացել, 20 կրեդիտ և ավելի պարտք ունեն 7 ուսանող, 30 կրեդիտից ավել պարտք՝ 3 ուսանող, գերազանց առաջադիմություն ունեն 10 ուսանող.

2-րդ կուրս՝ 156 ուսանողից 99-ը անբավարար գնահատական են ստացել, 20 կրեդիտ և ավելի պարտք ունեն 22 ուսանող, 30 կրեդիտից ավել պարտք՝ 5 ուսանող, գերազանց առաջադիմություն ունեն 14 ուսանող.

3-րդ կուրս՝ 172 ուսանողից 96-ը անբավարար գնահատական են ստացել, 20 կրեդիտ և ավելի պարտք ունեն 13 ուսանող, գերազանց առաջադիմություն ունեն 10 ուսանող.

Մագիստրատուրա 1-ին կուրս՝ 60 ուսանողից 12-ը անբավարար գնահատական են ստացել, գերազանց առաջադիմություն ունեն 26 ուսանող.

Հեռակա ուսուցմամբ 1-ին կուրս՝ 34 ուսանողից 29-ը անբավարար գնահատական են ստացել, 20 կրեդիտ և ավելի պարտք ունեն 2 ուսանող.

Հեռակա ուսումամբ 2-րդ կուրս՝ 61 ուսանողից 52-ը անբավարար գնահատական են ստացել, 20 կրեդիտ և ավելի պարտք ունեն 21 ուսանող, 24 կրեդիտից ավել պարտք՝ 3 ուսանող.

Հեռակա ուսուցմամբ 3-րդ կուրս՝ 63 ուսանողից 50-ը անբավարար գնահատական են ստացել, 20 կրեդիտ և ավելի պարտք ունեն 14 ուսանող, 24 կրեդիտից ավել պարտք՝ 1 ուսանող.

Հեռակա ուսուցմամբ 4-րդ կուրս՝ 57 ուսանողից 40-ը անբավարար գնահատական են ստացել, 20 կրեդիտ և ավելի պարտք ունեն 6 ուսանող.

Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա 1-ին կուրս՝ 27 ուսանողից 15-ը անբավարար գնահատական են ստացել.

Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա 2-րդ կուրս՝ 28 ուսանողից 18-ը անբավարար գնահատական են ստացել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունելի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսումնական հարցերով խոհրդատուներ (կուրատոր) պրոֆ. Հ.Խաչիկյանի, պրոֆ. Ա.Վաղարշյանի, Ա.Պետրոսյանի, դոց. Տ.Սիմոնյանի, դոց. Վ.Օհանյանի, ասիս. Կ.Ամիրջյանի, հաշվետվությունը հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքների մասին:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսումնական հարցերով խոհրդատուները (կուրատոր) ամփոփ տեղեկություններ ներկայացրին հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ.Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունելի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ գիտական խորհրդի անդամի ընտրություն:

Խորհրդի նախագահ պրոֆ. Գ.Ղազինյանը հայտնեց, որ ֆակուլտետից որպես ԵՊՀ գիտական խորհրդի անդամ ընտրված՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Մեղրյանն ընտրվել է ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում և այլևս չի զբաղեցնում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչի պաշտոնը: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև այն, որ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետից որպես ԵՊՀ գիտական խորհրդի անդամ մշտապես ընտրվել են ֆակուլտետի տարբեր ամբիոնների վարիչներ ռոտացիոն սկզբունքով՝ խորհրդի նախագահն առաջարկեց Քաղաքացիական դատավարության ամբիոնի նոր վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Հովհաննիսյանի թեկնածությունը, ով համապատասխանում է ԵՊՀ գիտական խորհրդի անդամին ներկայացվող պահանջներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ.Հ.Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Հովհաննիսյանին ընտրել ԵՊՀ գիտական խորհրդի անդամ:

6. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտամանկավարժական կազմի գիտական գործունեության մասին (հաշվետվություն և պլանավորում):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտահետազոտական աշխատանքների շարժն ըստ նախատեսված, կատարված և նախատեսվող ծրագրի¹

	Պետ. և իր. տեսության և պատմության	Սահմանադր. իրավունքի	Քաղ. իրավունքի	Քաղ. դատավարության	Քրեական իրավունքի	Քր. դատ. և կրիմինալիստիկայի	Եվրոպական և միջազգային իրավունքի
մենագրություն	1-2-2	2-0-2	1-0-1	1-0	0-1-0	3-2-1	0-1-2
դասագիրք	0-0-0	1 (վերիք.)-0-0	0-0-0	1-0	0-0-0	3-0-1	1-0-1
ուս. ձեռնարկ	2-1-1	0-0-1	2-3-1	1-0	0-1-1	0-0-0	2-0-2
ուս. մեթոդ. ձեռնարկ	2-0-1	0-1-1	2-2-0	0-2	0-0-0	0-0-0	1-0-0
դասախոս. տեքստ	2-5-5	0-0-0	0-0-0	1-0	0-0-0	0-0-0	0-0-0
ատենախոս-ն	2-2-1	2 (1թեկն. և 1դոկտ.)-3 (թեկն.)-1 (դոկ.)	2 (թեկն.) -3 (թեկն.)-1	1-0	3 (2թեկն., 1դոկտ.)-3-3(թեկն.)	2-0-3	3 (2թեկն. և 1դոկտ.)-0-5 (4 թեկն. և 1 դոկ.)
գիտ.հոդված	12-24-12	15-20-16	10-26-10	10-18	5-6-5	20-26-20	12-7-8
ԵՊՀ իր.ֆակ. ամենամյա և այլ գիտ.կոնֆերանս	2 (ԵՊՀ) 5 (միջ.) (հանրապ.) ²	2(ԵՊՀ)	2(ԵՊՀ)	2(ԵՊՀ)	2(ԵՊՀ) 1(միջ.)	2(ԵՊՀ) 4 (միջ.)	2(ԵՊՀ) (5միջ.) (1 հանր.)

¹ Ըստ հերթականության՝ **2017-2018թ-ին նախատեսված, կատարված, 2018-2019թ-ին նախատեսվող.**

² Գիտական կոնֆերանսները չունեն նախատեսված և նախատեսվող տողերը:

(միջ. և հանրապ.)						
------------------	--	--	--	--	--	--

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2017-2018թթ ուսումնական տարվա գիտական գործունեության

ամբիոն	Դասագիրք (նոր և վերահրատ.)	Ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկ, դասախոսության տեքստ	Մենագրություն	Ատենախոսության պաշտպանություն (թեկն. և դոկտ.)	Գիտական հոդվածներ	Գիտական զեկույցներ Ֆակուլտետի ամենամյա գիտաշրջան	Ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտաշրջան
Պետ. և իր. տեսության. և պատմության	0	6 (5 դասախոս. տեքստ)	2	0 (2 թեկն.)	24		
Սահմանադրական իրավունքի	0	1	0	0 (3 թեկն.)	20		
Քաղաքացիական իրավունքի	0	5	0	0 (3 թեկն.)	26		
Քաղաքացիական դատավարության	0	2	0	0	18		
Քրեական իրավունքի	0	1	3	1 (2 թեկն.)	6		
Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի	0	0	2	0	26		
Եվրոպական և միջազգային իրավունքի	0	0	1	0	7		
ԸՆԴԱՄԵՆԸ	0	15	8	10 թեկն. + 1 դոկտ.	127		

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հաշվետու տարում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գործունեության գիտահետազոտական բաղադրիչը շարունակում է մնալ իր բարձրության վրա, այդ են ցույց տալիս նախորդ և ներկա ուսումնական տարիների գիտահետազոտական արդյունքների համեմատական զուգահեռները: Այն հանգամանքը, որ նախորդ տարվա համեմատ՝ մենք հետընթաց չունենք, գնահատվում է դրական, սակայն միայն այդքանով չպետք է բավարարվել: Նախ ներկայացնենք առանձին ուղղություններով՝ գիտահետազոտական ցուցանիշները՝ նախորդ տարվա համեմատականներով՝

- հրատարակվել է 0 դասագիրք՝ նախորդ ուստարվա 3 դիմաց.
- հրատարակվել են 10 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ՝ նախորդ ուստարվա տարվա 6 դիմաց.
- հրատարակվել են 8 մենագրություններ՝ նախորդ ուստարվա 7 դիմաց.
- հրատարակվել է 127 գիտական հոդված՝ նախորդ ուստարվա 131 դիմաց.
- պաշտպանության է ներկայացվել 11 ատենախոսություն (10 թեկն. + 1 դոկտ.)՝ նախորդ ուստարվա 7 (7 թեկն. + 0 դոկտ.) դիմաց.

7. **ԼՍԵՑԻՆ.** Հաղորդում հանրային իշխանության մարմինների կողմից ստացված՝ գործնական հիմնախնդիրների թեմատիկայի համակարգման ընթացքի վերաբերյալ:

Խորհրդի քարտուղար Տ.Սուջյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հանրային իշխանության մարմինների կողմից ստացված՝ գործնական հիմնախնդիրների թեմատիկայի համակարգման ուղղությամբ ամբիոնների կողմից ձեռնարկված միջոցառումների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի

2017-2018 ուսումնական տարվա հաշվետվությունը

2017-2018 ուստարում ամբիոնի դասախոսներն իրականացրել են ուսումնական պլանով և ծրագրերով նախատեսված ուսումնական, մեթոդական և գիտահետազոտական աշխատանքները:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը հետևյալն է՝ մեկակադեմիկոս, երկու պրոֆեսոր, երեք դոկտոր, յոթ դոցենտ, չորս ասիստենտ և հինգ դասախոս:

Ուսումնական պրոցես --- 2017-2018 ուսումնական տարում ամբիոնում ուսումնական պրոցեսը կազմակերպվել և իրականացվել է պատշաճ մակարդակով:

Ամբիոնում առարկաների դասավանդումն իրականացվել է թարմացված ծրագրերի հիման վրա: Որոշ առարկաների ծրագրերի հիմնովին փոփոխվել են պայմանավորված՝ ՀՀ Դատական օրենսգիրքի, Դատախազության մասին ՀՀ օրենքի ընդունմամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված հիմնարար փոփոխություններով:

Ամբիոնում արդեն մի քանի տարի շարունակ կիրառվում է դասավանդման այն մեթոդիկան, որպես ինքնուրույն առաջնություն տալ գործնական հմտությունների խորացմանը: Կայանքը լայն է տալիս, որ ուսուցման արդյունավետ ձևը՝ տեսականի և գործնականի ճիշտ գույքը և: Ուսումնական գործընթացում այդ դիրքի իրականացման համար՝ հատուկ նշանակություն է հատկացվել ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների ուսումնասիրությանը:

Քրեական դատավարությունը ստանդարտներում առանձին քննարկման առարկա են հանդիսացել առավել արդիական և խնդրահարույց հարցերը, ինչպես նաև քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունները:

Ինչպես նախորդ, այնպես էլ սույն սուսումնական տարում մեծ տեղ է հատկացվել զործնական պարապմունքների պատշաճ իրականացմանը: Գործնական պարապմունքների ընթացքում հիմնականում քննարկվել են պրակտիկ իրավիճակներ: Պետք է նշել, որ զործնական պարապմունքների մակարդակը կատարված փոփոխությունների արդյունքում բավականին բարձրացել է: Այսինքն էապես մեծացել է ուսանողների ձգտումը զործնական պարապմունքներին պատրաստվելու և կատարելու նպատակով:

Ամբիոնում դասվանդվող բոլոր առարկաների ինչպես միջանկյալ քննությունները, այնպես էլ ընթացիկ ստուգումները անցկացվել են խնդիրների տեսքով: Էապես փոփոխվել են խնդիրների բովանդակությունը և առաջադրվող հարցերը: Հստակեցվել են խնդիրների պահանջները, ինչը հնարավորություն է տալիս ուսանողին ոչ միայն տալ խնդրի տեսական, այլև իրավիճակի վերլուծություն և օրենսդրության ճիշտ կիրառում:

Ամբողջությամբ վերանայվել են կուրսային, ՈւԳԸ, ավարտական և մագիստորասական աշխատանքների թեմատիկան: Այսուսումնական տարում նույնպես փորձել են քննարկել թեմաներ, որոնք ներկայացնում են պրակտիկ հետաքրքրություն և որոնց ցանկն ուղարկված էր համապատասխան գերատեսչությունների ցկոզմից:

Ի տարբերություն նախորդ տարվա, երբ պետական քննությունն անցկացրեցին քրավոր աշխատանքի, այսինքն խնդիրների տեսքով, սույն սուսումնական տարում բավականին շատ էին ավարտական աշխատանքներ գրողները:

Այս հանգամանքն օբյեկտիվորեն մտահոգություն է առաջացրեց դրանց որակի ապահովման հետևանքով:

Ամբիոնի դասախոսները մասնակցում են ֆակուլտետի իրավաբանական կլինիկայի աշխատանքներին:

Սույն սուսումնական տարում որոշակի խնդիրներ ունեցան քուսումնական դատական խաղերի կազմակերպման հարցում:

Մագիստրատուրայում սույն պես ուսումնական պրոցեսը կազմակերպվել և անցկացվել է պատշաճ մակարդակով:

Ամբիոնը ամբողջությամբ փոխել է մագիստրոսական թեզերի թեմաները՝ դրանք կապելով օրենսդրական նոր զարգացումների հետ և տալով առավել պրակտիկ ուղղվածություն: Նշված ուսումնական տարում ամբիոնում մագիստրոսական աշխատանքների ղեկավարումն ու պաշտպանությունն իրականացվել է պատշաճ մակարդակով:

Ամբիոնը պատշաճ մասնակցություն է ունեցել **ՈՒԳԸ աշխատանքների** կազմակերպմանը և իրականացմանը, որն իրականացվել է քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի իրավական կարգավորումների շրջանակներում: Ամբիոնը մասնակցել է ապրիլի 16-20 կազմակերպված տարեկան միջբուհական գիտաժողովին և կարգացվել է 22 զեկուցում, որից տասը երաշխավորվել է տպագրության:

Կազմակերպել և անցկացրել են քերկու դատախաղ: Արդեն երկրորդ անգամ է ամբիոնը ակտիվ մասնակցություն է ունենում 2017 թ. աշնանը կազմակերպված միջբուհական ուսումնական դատախաղին, որին մասնակցել են նաև հանրապետության մի քանի ԲՈՒՀ-րի իրավագիտության ֆակուլտետների և Արցախի համալսարանի թիմերը: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը դատախաղի արդյունքներով այս անգամ սույն պես գրավեց առաջին տեղը:

Գիտահետազոտական աշխատանքներ – 2017-2018 ուսումնական տարում ամբիոնում կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքները հետևյալն են՝ հրատարակվել է երկու մենագրություն և քսանյոթ գիտական հոդված: Հանրապետությունում իրականացվող դատախաղական բարեփոխումներին գուզընթացամբիոնը սույն ուսումնական տարում նախաձեռնեց Արդարադատության համակարգը դասընթացի նոր դասագրքին նախապատրաստված աշխատանքները, կարող են քփաստել, որ այն ավարտված է և սեպտեմբերին կներկայացվի հրատարակման:

Ամբիոնը սույնուսումնական տարում ավարտեց թեմատիկ հետազոտությունը՝ նվիրված վճռաբեկության ինստիտուտի հիմնախնդիրներին և որի շրջանակներում հրատարակեցին մի քանի գիտական հոդվածներ և մեկ մե նագրություն:

Սույնուսումնական տարում ամբիոնը՝ քրեական իրավունքի ամբիոնի հետ համատեղ, սկսեցին նոր թեմատիկ հետազոտություն՝ նվիրված անչափահասների գործերով վարույթի առանձնահատկություններին:

Ամբիոնը մասնակցել է պրոֆեսորա- դասախոսական կազմի տարեկան գիտական նստաշրջանին: Կարդացվել է երեք գեկուցում և սպագրվել վեց գիտական հոդված:

Ամբիոնը մասնակցել է ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտական նստաշրջանին՝ գեկուցումով հանդես եկել էր երբ, իսկ սպագրվել է երկու գիտական հոդված:

Նշված ուսումնական տարում ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել է քսանյոթ գիտական հոդված, որոնցից հինգ սպագրվել է Սարանսկում՝ համատեղ անցկացված գիտական կոնֆերանսի արդյունքներով, երեք հոդված՝ Կիևում:

Պրոֆեսոր Գ. Ղազինյանը 2017թ. հունիսի 23-24 Սանկտ-Պետերբուրգում մասնակցել է «Научная школа уголовного процесса и криминалистики СПбУ: уголовная юстиция XXI века» միջազգային գիտագործնական կոնֆերանսին: Կոնֆերանսի շրջանակներում նրա կողմից կարդացվել է գիտական գեկուցում «Современные вызовы уголовного правосудия в Республике Армения» վերտառությամբ:

Պրոֆեսոր Գ. Ղազինյանը 2017թ. սեպտեմբերի 28-ին մասնակցել է նաև «Դատական իշխանությունը Հայաստանի Հանրապետությունում սահմանադրաիրավական բարեփոխումներին երբ» միջազգային գիտաժողովին և հանդես է եկել «Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը» վերտառությամբ գեկուցումով:

Ամբիոնի ղեկավարը, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Ա.Թաթոյանը 2017թ. դեկտեմբերի 6-ին Մոսկվայում մասնակցել է «Մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները եվրասիական հարթությունում. օմբուդսմանների լավագույն փորձի փոխանակում» խորագրով համաժողովին և հանդես է եկել «Մարդու իրավունքների պաշտպանի նոր օրենսդրական կարգավորումներն ու զարգացման միտումները» վերտառությամբ գեկուցմամբ:

Նշված ուսումնական տարում ամբիոնը՝ քրեական իրավունքի ամբիոնի հետ միասին՝ ԱՄՆ-ի դեսպանատան աջակցությամբ, ՀՀ արդարադատության նախարարի միջնորդությամբ իրականացնում է ուսումնական ծավալուն ծրագիր:

Նշված մոդուլներով կազմվել են հատուկ ծրագրեր և համապատասխան դասախոսություններ կարդացվել դատավորների հոդատախազների համար:

Ներկայացված մոդուլներով դատավորների և դատախազների համար մշակում են քրեական դատախոսության տեքստեր:

Սույն ուսումնական տարում ամբիոնը թերացավ ուսումնական դատախազների կազմակերպման, ինչպես նաև պրակտիկ աշխատողների հետ պլանավորված անդալանական հանդիպումների կազմակերպման հարցերում:

Կադրային աշխատանքներ -- Ամբիոնը կադրային ապահովվածության հետ կապված որոշ խնդիրներ ունի, կապված դասախոսների հիմնական մասի համատեղության հետ: Տվյալ պահին ամբիոնն ունի չորս ասպիրանտ, որոնցից երկուսն անոկա, իսկ երկուսը՝ հեռակա:

Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ս. Դիլբանոյան